

ՀՐԱՎԻԿ ԱՎԱԳ-ՅԱՆ, երկր. հանք. գիտ. դոկտոր

ՀՀ ԳԱԱ Մ. Քորամյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի
զինավոր գիտաշխատող

ՀԱԶՎԱԳՅՈՒՏ ՀՈՂԱՏԱՐԵՐՆ ԱԲՈՎՅԱՆԻ ԵՐԿԱԹԻ ՀԱՆՔԱՎԱՅՐՈՒՄ

Նախ՝ տեսնենք, թե ինչ են իրենցից ներկայացնում հողատարերն ու ինչ կարևորություն ունեն դրանք ժամանակակից արդյունաբերության մեջ:

Քիմիական գիտությունը հողատարերի շարքին է դասում Դ.Մենդելեևի պարբերական աղյուսակի երրորդ խմբի երկրորդ ենթախմբի 3՝ սկանդիում, իտորիում և լանտան և թիվ 57 հերթական համարից (լանտանից) հետո առանձին շարքով շարված լանտանուդիումեր կոչվող 14 տարրերը: Դրանք են ցեզիումը, պրազեումիմը, նեոպյումը, պրոմեթիումը, սամարիումը, եվրոպյումը, գաղոլինումը, տերբիումը, դիսպրոյումը, հոլմիումը, էրբիումը, թուլիումը իտտերբիումը և լուտեցիումը (ընդամենը 17 տարրեր):

Բոլոր հողատարերն իրենց քիմիական և ֆիզիկաքիմիական հատկություններով շատ մոտ են միմյանց և բնության մեջ սպիրաբար գտնվում են միասին: Դրանց գիշավոր աղբյուրներից են նոնացիտ և բաստմեզիտ հանքանյութերը, որոնք հիմնականում բաղկացած են ցերիումի, լանտանի, իտորիումի և մյուս հողատարերի կարբոնատներից և ֆոսֆատներից: Ազատ վիճակում հողատարերն իրենցից ներկայացնում են արծարասպիտակ մետաղներ՝ հալման բարձր ջերմաստիճաններով: Դրանց մետաղական հատկություններն արտահայտված են ավելի կտրուկ, քան քիմիական խմբի գլխավոր (I) ենթախմբի տարրերինը:

Ժամանակակից գիտատար տեխնոլոգիաները համաշխարհային շուկայում հանդիսանում են երկրի էկոնոմիկայի մրցունակության ապահովման հիմքը:

«Տեխնիկայի և տեխնոլոգիաների զարգացումը ուղեցվում է մշակող արդյունաբերության արտադրանքների պահանջարկի մեծացմամբ, առաջին հերթին մետաղորգիական համակրի՝ մետաղների և համաձուլվածքների գծով՝ իրենց ամբողջ բազմազանությամբ: Հետևաբար՝ մետալորգիական ճյուղի վիճակով և հարակից լեռնահանքային արդյունաբերության ու վերջինիս կողմից բողարկվող արտադրանքի որակից է կախված նոր տեխնոլոգիաների իրացման հարցը, ինչպես նաև բարձր տեխնոլոգիական արտադրանքների որակը:»

Սկանդիումի կիրառությունը մինչև 2000 թվականը շատ սահմանափակ էր: Սկանդիումի միացություններն ու օքսիդները կիրառվում էին էլեկտրոնիկայում, մասնավորապես ֆերրիտները, որոնք պարունակում են ոչ մեծ քանակի սկանդիումի օքսիդ, կիրառվում են արագ գործող հաշվողական սարքերում: Մետաղական սկանդիումը կիրառվում է էլեկտրավակուումային տեխնիկայում որպես լավ գետտեր (գագերի չփոշիացնող կլանիչ): Իտորիումի օքսիդը նույնապես կիրառվում է ֆերրիտների արտադրության մեջ: Իտորիում պարունակող ֆերրիտները կիրառվում են լսողական զորդիքներում, հաշվողական սարքերի հիշողական բջիջներում: Իտորիումի 90 իզոտոպը կիրառվում է բժշկության մեջ:

Շատ լանտանուդիում և դրանց միացություններ կիրառություն են գտել գիտության և տեխնիկայի բազմաթիվ ճյուղերում: Դրանք կիրառվում են պողպատների, բուժի, գունավոր մետաղների համաձուլվածքների արտադրության գործում: Այդ պարագայում օգտագործվում է գլխավորապես միշմետալ-լանտանուդիումների համաձուլվածքը ցերիումի և լանտանի գերակիոր պարունակությամբ: Լանտանուդիումների փոքր քանակության խառնուրդը բարձրացնում է շժանգոտվող, արագ կտրող, հրակայուն պողպատների և բուժի որակը: 0,35% միշմետալի խառնուրդը «միխրոմի» մեջ դրա ծառայելու ժամանակահատվածը՝ 1000°C -ում, մեծացնում է տասն անգամ: Լանտանուդիումների խառնուրդն ալյումինիումի և մագնեզիումի համաձուլվածքներին մեծացնում է դրանց ամրությունը բարձր ջերմաստիճանների պայմաններում:

Հազվագյուտ հողատարրային մետաղների խոշոր չափերի կիրառող է հանդիսանում ապակու արտադրությունը: Յերիտմ պարունակող ապակին չի խունանում ռադիոակտիվ ճառագայթման ազդեցության մերքը և կիրառվում է միջուկային տեխնիկայում: Լանտանիդների օքսիդների փոքր քանակների հավելումը կիրառվում է ապակիների գունավորման և գունաքաղման համար: Այսպես, նեղինի օքսիդը ապակուն տալիս է վառ կարմիր գույն, իսկ պրոմեթիումի օքսիդը՝ կանաչ: Լանտանիդների օքսիդները կիրառվում են նաև ճեմապակու, ջնարակի և արծնապակու գունավորման համար:

Ամերիկյան «Վեստինգհաուզ» ֆիրման ցիրկոնիումի և իտտրիումի օքսիդների հիման վրա ծագել է բարձրջերմաստիճանային վառելիքային սարք, որը 35-60 տոկոսով մեծացնում է ջերմային էլեկտրակայանների օգտակար գործողության գործակիցը՝ 15%-ով մեծացնելով բարձր օկտանային թիվ ունեցող բենզինի ելքը:

Ծապոնիայում և ԱՄՆ-ում ստեղծվել են լումինաֆորային լամպեր, որոնք պարունակում են խտտրիում, ելուռպիում, տերիում և ցերիում, որոնք ել էլեկտրաէներգիայի խնայողություն են ապահովում 200-300%-ով:

Հազվագյուտ հողատարրերի և ռենիումի կիրառությունը նավի կրեկինգում հնարավորություն է ընձեռել խիստ կրծատելու պլատինի կիրառությունն այդ գործում և բարձրացնելու գործընթացի օգտակար գործողության գործակիցը՝ 15%-ով մեծացնելով բարձր օկտանային թիվ ունեցող բենզինի ելքը:

Սկանդիումը՝ մի քանի հատկությունների համատեղման շնորհիվ, այժմ մեծ ուշադրության է արժանացել ինքնարիուաշխնության, հրթիռաշխնության և լազերային տեխնիկաներում:

Հազվագյուտ տարրերը, այդ թվում նաև հազվագյուտ հողատարրերը, այժմ համարվում են «արդյունաբերության վիտամիններ», քանի որ առանց դրանց արդյունաբերության առաջընթաց ապահովելը դառնում է անհնարին:

Վերջին 20-30 տարիներին հազվագյուտ հողատարրերի համար բացահայտվել է նոր ուղղություն ավտոմոբիլաշխնության մեջ, և այդ ուղղությունը դարձել է հեռանկարային բոլոր երկրների ավտոմոբիլաշխնության գործում:

Գիտնականները գտնում են, որ հազվագյուտ մետաղների (այդ թվում առաջին հերթին հազվագյուտ հողատարրային մետաղների) նկատմամբ պահանջարկը երկարատև հեռանկարում ոչ միայն չի նվազի, ոչ միայն չի մնա կայուն, այլ դանդաղ և կայուն թափով կարող է աճել¹:

Հազվագյուտ հողատարրեր են հայտնաբերված ՀՀ երկարաբարային հանքավայրերի մեծ մասի տարածքում, այս հանքավայրերի, որոնց տարածքը որոշակի աստիճանի հետախուզված և հետազոտված է: Դրանցից են՝ Արովյանի մանրազնին հետախուզված (հաշվեկշռային պաշարներով) հանքավայրը, Սվարանցի և Բազումի նախնական փոլով հետախուզված հանքավայրերը, որոնց տարածքում առկա են հեղինակային հաշվարկված պաշարներ: Նշված հանքավայրերից բացի, Հայաստանի տարածքում հայտնաբերված են հարյուրից ավելի փոքր ու մեծ հանքաերևակումներ, որոնք դեռևս չեն հետախուզվել և երկարի հետ տարածված հարակից բաղադրիչների գծով չեն հետազոտվել: Վերջիններիս թվին են պատկանում Թթուցուր-Մարտունու և Կամաքարի հանքաերևակումները, որոնք երկարի պարունակությամբ և քանակային առումով առավել հեռանկարային են: Վերջերս, Գորիսում իր ծերության «հաճույքը» վայելող, Մեղրու շրջանի անխոնջ հետազոտող իմ երկրաբան ընկեր Գ.Խոջաբայյանն իման էր ուղարկել մեկ էջի վրա Կամաքարի երկարի հանքավայրի գաբրոնիդներից վերցված նմուշների անալիզների տվյալները, որոնք մեծ հեռանկար են կանխատեսում հողատարրային մետաղների և 16 այլ տարրերի գծով: Ճիշտ է, ինձ հանձնված էջից չի երևում, թե քանի նմուշի անալիզների տվյալներ են բերված, որտեղից են (է) վերցված այդ նմուշները (նմուշը), որքան է երկարի պարունակությունը և այլն: Սակայն այդ տվյալները, որոնք մենք հետազույուն կրերենք սույն հողվածի վերջնամասում, մեծ հեռանկարներ են խոստանում ՀՀ-ում հողատարրային մետաղների պաշարների հայտնաբերման գծով: Նշենք նաև այն, որ հողատարրային մետաղների արդյունաբերական պաշարները համաշխարհային մասշտարով

¹ <http://www.m-economy.ru/art.php?nArtId=3796>

հաշվարկվում են մի քանի տասնյակ միլիոն տոննա և ոչ ավելի: Կան երկրներ, որտեղ հողատարրային մետաղների պաշարները կազմում են մի քանի հազար տոննա, և այդ երկրները ձեռնարկել են այդ պաշարների արդյունահանումն և կիրառման գործընթաց: Վերջիններիս բային են պատկանում Բրազիլիան՝ 48 հազ.տ, Մալայզիան՝ 30 հազ.տ և այլն: Հազվագյուտ հողատարրային մետաղների համաշխարհային պաշարները 2009թ. տվյալներով գնահատված են 99 մլն տ (դրանց օքսիդների հաշվարկով), որից Չինական ժողովրդական Հանրապետությանը՝ 36 մլն տ, իսկ Հնդկաստանինը՝ 3,1 մլն տ¹:

Հողատարրային մետաղներն ընդհանրապես կիրառվում են շատ փոքր քանակներով, որի հետ էլ կապված միջազգային շուկայում դրանք վաճառվում են կիրարամներով: Հողատարրային մետաղների մենաշնորհը պատկանում է Չինական ժողովրդական Հանրապետությանը (ՉԺՀ-ին) և պատկանում հողատարրային մետաղների արդյունահանման 90%-ը), և միջազգային շուկայում այդ մետաղների գները կախված են նրանից, թե ՉԺՀ-ն որքան մետաղ դրիս կրերի շուկա: 2011թ. սկանդիլումի մեկ կգ-ը վաճառվել է 5216,7 ԱՄՆ դոլարով, իսկ եվրոպիլումին՝ 4015-ից մինչև 4324 դոլարով (մասնագետները նշում են, որ եղել է ժամանակ, երբ սկանդիլումի գինը 10-6 անգամ գերազանցել է ուշու գնին):

Հազվագյուտ հողատարրեր են հայտնաբերված ՀՀ երկարաբարային՝ որոշակի աստիճանի հետազոտված, հանքավայրերի մեծ մասի տարածքում, հատկապես այն հանքավայրերի, որոնք հետազոտվել են գիտնական-երկրաբանների (ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտի աշխատակիցների) կողմից (հետախույզ-երկրաբաններին չեր հետաքրքրում հիմնական մետաղների հետ հարակից տարածված տարրերը. օրինակ՝ երկարի հանքավայր հետախուզելիս նմուշներն անալիզի էին հանձնում միայն երկար մետաղի պարունակությունը որոշելու համար, աղնաձի հանքավայր հետախուզելիս՝ պղնձի պարունակությունը որոշելու համար և այլն): Այդ իսկ պատճառով էլ մեր հետազոտությունները՝ հազվագյուտ հողատարրային մետաղների գծով, հիմնված են լինելու ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտի աշխատակիցների՝ գիտնական-երկրաբանների աշխատանքների վրա: Եվ այսպես՝

Արովյանի երկարի հաճքավայրի հաճքաքարերում՝ Ի.Մաղաքյանի և Գ.Փիջյանի (1972)¹ տվյալներով՝ հայտնաբերված հազվագյուտ հողատարբերի պարունակությունները կազմում են մազմետիտ-ապատիտային հոծ հաճքաքարերում. ցերիտմինը՝ 1-3% (միջին պարունակությունն ընդունվում է 2 %), լանտանինը՝ 0,3-0,5% (միջինը՝ 0,4%), իտորիտմինը՝ 0,05%: Ապատիտային հաճքանյուրում, որի պարունակությունը Արովյանի հաճքաքարերում կազմում է 3-ից մինչև 13% (միջինը՝ 8%) հազվագյուտ հողատարբային մետաղների ընդհանուր պարունակությունը կազմում է 2,48-ից մինչև 4,32%: Այս, միահաճքանյուրային ապատիտներում հայտնաբերված իտորիտմի պարունակությունը կազմում է 0,1-0,14% (միջինը՝ 0,12%), լանտանինը՝ 0,64-1,1% (միջինը՝ 0,87%), ցերիտմինը՝ 1,36-2,3% (միջինը՝ 1,83%), իտորիտմինը՝ 0,002-0,004% (միջինը՝ 0,003%), պրազեռիմինը՝ 0,05-0,09% (միջինը՝ 0,07%), նեռլիմինը՝ 0,22-0,44% (միջինը՝ 0,33%), գաղոլինիտմինը՝ 0,03-0,04% (միջինը՝ 0,035%), դիսպլոզիտմինը՝ 0,06-0,17% (միջինը՝ 0,115%), էրբիումինը՝ 0,0014-0,004% (միջինը՝ 0,0022%), թուլիումինը՝ 0,0003-0,0004% (միջինը՝ 0,00035%), լուտեցիումինը՝ 0,0003-0,003% (միջինը՝ 0,00165%), սամարիումինը՝ 0,02-0,03% (միջինը՝ 0,025%), եվրոպիումինը՝ 0,001-0,0016% (միջինը՝ 0,0013%):

Նշենք, որ Արովյանի երկարի հանքավայրի հանքաքարերի ընդհանուր (հետախուզված) պաշարների քանակը կազմում է 260,6 մլն տ, որոնց մեջ էլ միահանքանյութային ապատիտի քանակը կազմում է 20,848 մլն տ, իսկ մագնետիտ-ապատիտային հոծ հանքաքարերի պաշարները՝ 243,6 մլն տ: Վերջիններիս մեջ հազվագյուտ հողատարրային մետաղների քանակները՝ հաշվարկված մեր կողմից դրանց միջին պարունակություններով, կազմում են. ցերիումինը՝ 4 մլն 872 հազ.տ, յանտանինը՝ 974,4 հազ.տ, իտուրիումինը՝ 121,8 հազ.տ:

¹ Магакьян И.Г., Пиджян Г.О. и др. Редкие и благородные элементы в рудных формациях Армянской ССР. Ереван, Изд. АН АрмССР, 1972, 394 с.

Սիսահանքանյութային ապատիտներում մյուս հողատարրային մետաղների քանակները՝ հաշվարկված մեր կողմից, կազմում են. խտերբիումինը՝ 625,4տ, պրազեռդիմինը՝ 14.593,6տ, նեռդիմինը՝ 68.798,4տ, գաղոլինիումինը՝ 7296,8տ, դիսպրոզիումինը՝ 23.975,2տ, էրիումինը՝ 458,7տ, թուլիումինը՝ 73տ, լուտեցիումինը՝ 3440տ, սամարիումինը՝ 5212տ, եվրոպիումինը՝ 271տ:

Այսպիսով, Արովյանի հանքավայրի հողատարրային մետաղների ընդհանուր քանակը (ռեսուրսը) կազմում է 6.092.944,1տ:

Արովյանի հանքավայրի հողատարրային մետաղների ընդհանուր ռեսուրսների արժեքն ընդերքում հաշվելու համար մեզ անհրաժեշտ է ունենալ դրանցից յուրաքանչյուրի գինը միջազգային շուկայում: Դրանք ունենալու համար երկար վճարություններն ի վերջո մեզ բերեցին էլեկտրոնային փոստի՝ սայթ <http://tdm96.ru/?=829> հասցեն, որտեղ 13 տարրերից 11-ի համար տվյալներ կային: Տվյալները չկային սամարիումի և թուլիումի համար, որոնց համար մենք ընդունում ենք նշված 11 տարրերի համար միջին հավասարակշռված գինը՝ 129.081,4 դոլ/տ:

Աղյուսակ 1

Արովյանի երկարի հանքավայրի հողատարրային մետաղների ռեսուրսների արժեքի հաշվարկ

Տարրերը	Տարրերի քանակի միավորը	Տարրերի քանակը	Տարրերի գինը, դոլ/տ	Տարրերի ընդհանուր քանակի արժեքը, դոլ.
Յերիում	տ	4.872.000	121.800	593.409.600.000
Լանտան	տ	974.400	105.100	102.409.440.000
Իտարիում	տ	121.800	173.000	21.071.400.000
Պրազեռդիում	տ	14.593,6	257.200	3.753.473.920
Նեռդիմ	տ	68.798,4	308.100	21.196.787.040
Եվրոպիում	տ	271	4.168.000	1.129.528.000
Գիսպրոզիում	տ	23.975,2	1.470.000	35.243.544.000
Էրբիում	տ	458,7	248.900	114.170.430
Լուտեցիում	տ	3440	1.714.200	5.896.848.000
Գաղոլինիում	տ	7296,8	198.100	1.445.496.080
Իտտերիում	տ	625,4	213.100	133.272.740
Սամարիում	տ	5212	129.081,4	672.772.257
Թուլիում	տ	73	129.081,4	9.422.942
Ընդամենը		6.092.944,1		786.485.755.409

Վերը բերված հաշվարկից պարզվում է, որ Արովյանի երկարի հանքավայրի երկար մետաղի հետ հարակից տարածված հազվագյուտ հողատարրային 13 մետաղների՝ 6 մլն 92 հազ. 944,1տ քանակն ընդերքում արժենուս է 786 մլրդ 485,75 մլն ԱՄՆ դոլար: Բայց Արովյանի հանքավայրը միակը չէ, որ պարունակում է հազվագյուտ հողատարրեր: Մինչ այժմ, դեռևս նախկին ԽՍՀՄ-ի տարիներից, մեզ հայտնի էր, որ հազվագյուտ հողատարրեր են պարունակում նաև Բազումի և Սվարացի երկարի հանքավայրերը՝ յուրաքանչյուրում 50 հազ.տ քանակով: Այդ առթիվ տվյալները չկային դեռևս չհետախուզված և չհետազոտված երկարի մյուս հանքավայրերի վերաբերյալ: Սակայն, ինչպես նշվել է վերևում, 2013թ. վերջերին, ավելի ստույգ նոյեմբերի սկզբին, մեզ՝ ՀՀ Այունիքի նարզի Մեղրու շրջանի գաբրոնիդային ապարների վերաբերյալ, որոնց մեջ էլ տեղադրված է Կամաքարի երկարի հանքաերևակումը, տվյալներ բերեց մի երիտասարդ, որը մտնելով իմ աշխատասենյակ ասաց. «Սա Ձեզ են ուղարկել Գորիսից», – և ինձ տվեց մեկ էջ: Այդ տվյալներն իրենց որոշակի թերություններով հանդերձ (մի քանի կարևորագույն տեղեկությունների պակասով) մեծ հույս են ներշնչում, որ Կամաքարի հանքաերևակման տարածքում և շրջակայրում մենք կարող ենք ունենալ հազվագյուտ հողատարրերի շատ ու շատ ավելի մեծաքանակ ռեսուրսներ, քան դրանք գնահատված են Արովյանի հանքավայրի տարածքում (ստորև բերում ենք այդ տվյալները):

Նշված թերությունները հետևյալներն են.

- հայտնի չէ, թե բերված անալիզները քանի նմուշի հիման վրա են,
- այդ անալիզները իսկապե՞ս պատկանում են գարրոփային ապարներին, թե՞ գարրոփային մեջ տեղադրված երկարի (Կամաքարի հանքարևակման) կամ այլ հանքանյութերին,
- ինչպիսի՞ տարածք են բնութագրում վերցված նմուշները (նմուշը՝ մե՞կ կետ, 2 քառ.կմ մակերես, 100 խ.մ ծավալ, թե՞…)

Ինչիցեւ, եթե բերված անալիզները իսկապես պատկանում են գարրոփային ապարներին, որոնք Սերու շրջանում գրադեցնում են ավելի քան 100 քառ.կմ մակերես, ապա մինչև 100մ խորությունը (գարրոփային ապարների քաշը՝ 26 մլրդ տ) հազվագյուտ հողատարրային մետաղների ռեսուրսները կարող են կազմել լանտանինը՝ 3.202.680տ (լանտանի պարունակությունը կազմում է 0,012318%), ցերումինը՝ 5.660.330տ (ցերումի պարունակությունը կազմում է 0,0217705%), պրագեոդիմինը՝ 1885000տ (պարունակությունը՝ 0,00725%), նեոդիմինը՝ 4.030.780տ (պարունակությունը՝ 0,015503%), սամարիտինը՝ 569.400տ (պարունակությունը՝ 0,00219%), եվրոպիտինը՝ 143.000տ (պարունակությունը՝ 0,00055%), գադոլինիտիմինը՝ 439.400տ (պարունակությունը՝ 0,00169%), տերբիումինը՝ 52000տ (պարունակությունը՝ 0,0002%), դիսպրոզիումինը՝ 265.200տ (պարունակությունը՝ 0,00102%), հոլմիումինը՝ 38.740տ (պարունակությունը՝ 0,000149%), էրբիումինը՝ 104.000տ (պարունակությունը՝ 0,0004%), բուլիումինը՝ 13.000տ (պարունակությունը՝ 0,00005%), խոտերբիումինը՝ 76.180տ (պարունակությունը՝ 0,000293%), լուտեցիումինը՝ 10.920տ (պարունակությունը՝ 0,000042%), սկանդումինը՝ 6.994.000տ (պարունակությունը՝ 0,0269%), խոտերբիումինը՝ 884.000տ (պարունակությունը՝ 0,0034%): Հազվագյուտ հողատարրային 16 մետաղների ընդհանուր քանակը կարող է կազմել 24 մլն 368 հազ.630տ:

Հազվագյուտ հողատարրային մետաղներից բացի հայտնաբերված են ևս 15 այլ տարրեր, որոնցից 11-ը պատկանում են հազվագյուտ տարրերի թվին: Այստեղ անհրաժեշտ է նշել ֆոսֆորի բավականին բարձր պարունակությունը (0,7%), որն էլ մեզ ուղղորդում է այն հարցի վրա, որ վերցված նմուշներում (նմուշում) հավանաբար առկա է հազվագյուտ հողատարրերի մոնացիտ ($CePO_4$) հանքանյութը, որի մեջ պարունակվում են շատ այլ հողատարրեր (չի բացառում նաև բաստեզիտ՝ $CeCO_3F$ հանքանյութի առկայությունը):

Այլ տարրերի քանակները գարրոփային ապարների մեջ (մինչև 100մ խորությունը) կարող են կազմել.

տանտալինը՝ 122.200տ (պարունակությունը՝ 0,00047%), նիոբիումինը՝ 2.080.000տ (պարունակությունը՝ 0,008%), լիթիումինը՝ 3.640.000տ (պարունակությունը՝ 0,014%), բերիլիումինը՝ 447.200տ (պարունակությունը՝ 0,00172%), բորինը՝ 23.400.000տ (պարունակությունը՝ 0,09%), ֆոսֆորինը՝ 182.000.000տ (պարունակությունը՝ 0,7%), տիտանինը՝ 780.000.000տ (պարունակությունը՝ 3,0%), բրոմինը՝ 13.520.000տ (պարունակությունը՝ 0,052%), կորալտինը՝ 14.040.000տ (պարունակությունը՝ 0,054%), նիկելինը՝ 5.720.000տ (պարունակությունը՝ 0,022%), պղնձինը՝ 33.800.000տ (պարունակությունը՝ 0,13%), ցինկինը՝ 221.000.000տ (պարունակությունը՝ 0,85%), գալիումինը՝ 3.900.000տ (պարունակությունը՝ 0,015%), գերմանիումինը՝ 286.000տ (պարունակությունը՝ 0,0011%), մկնեղինը՝ 4.420.000տ (պարունակությունը՝ 0,017%):

«Արբանյակ» (այսպես են անվանել անալիզի հեղինակները հողատարրային մետաղների հետ հարակից (զուգակցվող) տարրերին) տարրերի նշված քանակներով «առկայությունը» մեզ ասում է այն մասին, որ մեզ փոխանցված անալիզները չեն կարող պատկանել գարրոփային ապարներին: Այդ տվյալները շատ մեծ հավանականությամբ պատկանում են Կամաքարի երկարի հանքարևակմանը, որի կանխատեսումային ռեսուրսները հանքարերի գծով գնահատված են մեկ մլրդ տոննա քանակով, ուստի հազվագյուտ հողատարրային մետաղների ռեսուրսները կարող են կազմել.

լանտանինը՝ 123.180տ, ցերիումինը՝ 217.705տ, պրագեոդիմինը՝ 72.500տ, նեոդիմինը՝ 155.030տ, սամարիումինը՝ 21.900տ, եվրոպիումինը՝ 5500տ, գադոլինիումինը՝ 16.900տ, տերբիումինը՝ 2000տ, դիսպրոզիումինը՝ 10.200տ, հոլմիումինը՝ 1490տ, էրբիումինը՝ 4000տ, բուլիումինը՝ 500տ, խոտերբիումինը՝ 2930տ, լուտեցիումինը՝ 420տ, սկանդումինը՝ 269.000տ, խոտրիումինը՝ 34.000տ:

Հողատարրերի ընդհանուր քանակն այս պարագայում կարող է կազմել 937259տ:

Հողատարրերի հետ հարակից տարածված տարրերի ռեսուրսները կարող են կազմել տանտալինը՝ 4700տ, նիոբիումինը՝ 80000տ, լիթումինը՝ 140.000տ, բերիլիումինը՝ 17.200տ, բրինը՝ 900.000տ, ֆոսֆորինը՝ 7.000000տ, տիտանինը՝ 30.000.000տ, քրոմինը՝ 520.000տ, կոբալտինը՝ 540.000տ, միկելինը՝ 220.000տ, պղնձինը՝ 1.300.000տ, ցինկինը՝ 8.500.000տ, գալիումինը՝ 150.000տ, գերմանիումինը՝ 11.000տ, մնացելինը՝ 170.000տ:

Բերված տվյալները, չնայած նրան, որ բնութագրական չեն Կամաքարի երկարի հաճախերևակման համար, այնուամենայնիվ, վկայում են այն մասին, որ Կամաքարի երկարի հաճախերևակումը մեծ հետաքրքրություն է ներկայացնում և դա պետք է հետախուզվի և հետազոտվի մանրակրկիտ:

Հազվագյուտ տարրերն ու հողատարրերն իրենց մեջ մեծ արժեք են պարունակում: Արժեքանոցվ գրադարձելը:

Այժմ տանը Կամաքարի երկարի հաճախերևակման հողատարրային մետաղների և դրանց հետ հարակից տարածված այլ տարրերի (այդ թվում հազվագյուտ տարրերի) նախնական գնահատականն անջատ-անջատ:

Աղյուսակ 2

Կամաքարի երկարի հաճախերևակման հազվագյուտ հողատարրային մետաղների ռեսուրսների արժեքի հաշվարկն ընդերքում

Տարրերը	Տարրերի քանակի միավորը	Տարրերի քանակը	Տարրերի միավորի արժեքը, դր.	Տարրերի ընդհանուր քանակի արժեքը, դր.
Լանտան	տ	123.180	105.100	12.946.218.000
Ցերիում	տ	217.705	121.800	26.516.469.000
Պրազոնիում	տ	72.500	257.200	18.647.000.000
Նեոնիմ	տ	155.030	308.100	47.764.743.000
Սամարիում	տ	21.900	129.081,4	2.826.882.660
Եվրոպիում	տ	5500	4.168.000	22.924.000.000
Գալույնիում	տ	16900	198.100	3.347.890.000
Տերբիում	տ	2000	3.527.400	7.054.800.000
Դիսպրոցիում	տ	10.200	1.470.000	14.994.000.000
Հոլմիում	տ	1490	644.900	960.901.000
Էրբիում	տ	4000	248.900	995.600.000
Թույում	տ	500	129.081,4	64.540.700
Իտտերբիում	տ	2930	213.100	624.383.000
Լուտեցիում	տ	420	1.714.200	719.964.000
Սլանիում	տ	269.000	5.216.700	1.403.292.300.000
Իտտրիում	տ	34.000	173.000	5.882.000.000
Ընդհանուր				1.569.561.691.360

Համոզված ենք, որ բերված անալիզները պատկանում են Կամաքարի հաճախերևակման երկարաբարային և հարակից տարածված տարրերին: Բայց, ինչո՞ւ չկան երկար մետաղի անալիզի տվյալները, հասկանալի չէ: Կարող ենք ենթադրել, որ նշված անալիզները կատարվել են Զինական Ժողովրդական Հանրապետությունում, և երկարի անալիզի տվյալներն ել չեն բերվել միտումնավոր (հողատարրային մետաղներով շահագրգիռ հետաքրքրություն ներկայացնող երկիրը չբացահայտելու համար):

Աղյուսակ 3

Կամաքարի երկարի հաճախերևակման հողատարրային մետաղների հետ հարակից տարածված այլ տարրերի

ռեսուրսների հաշվարկը (առանց բորի և ֆուֆորի)

Տարրերը	Տարրերի քանակի միավորը	Տարրերի քանակը	Տարրերի միավորի արժեքը, դր.	Տարրերի ընդհանուր քանակի արժեքը, դր.
Տանտալ	տ	4700	200.000	940.000.000
Նիորիում	տ	80.000	193400	15.472.000.000
Լիթիում	տ	140.000	7000	980.000.000
Բերիլիում	տ	17.200	110.000	1.892.000.000
Տիտան	տ	30.000.000	18.000	540.000.000.000
Ջրոմ	տ	520.000	7900	4.108.000.000
Կորալտ	տ	540.000	66.660	35.996.400.000
Նիկել	տ	220.000	44.780	9.851.600.000
Պղինձ	տ	1.300.000	7465	9.704.500.000
Ցինկ	տ	8.500.000	3400	28.900.000.000
Գալիում	տ	150.000	460.000	69.000.000.000
Գերմանիում	տ	11.000	680.000	7.480.000.000
Մկնդեղ	տ	170.000	1220	207.400.000
Ընդամենը				724.531.900.000

Այսուսակ 3-ում բերված 13 տարրերից 11-ը պատկանում են հազվագյուտ մետաղների թվին, որոնց արժեքն ընդերքում կազմում է 685 մլրդ 927,4 մլն դրամ, իսկ մյուս երկու՝ ոչ հազվագյուտ մետաղների (պղնձի և ցինկի) արժեքը՝ 38 մլրդ 604,5 մլն դրամ:

Այս հաշվարկներում չի մասնակցում Կամաքարի հանքաերևակման երկար մետաղի 340 մլն տ ռեսուրսի արժեքը: Վերջինս կազմում է 102 մլրդ դրամ: Հետևապես, Կամաքարի հանքաերևակման ընդերքի ողջ հարստության ընդհանուր արժեքը կազմում է 2 տրիլիոն 396 մլրդ 93,6 մլն դրամ (սա մոտավոր թիվ է, որը կարող է ճշտվել միայն հանքաերևակումը մանրակրկիտ հետախուզումից ու հետազոտումից հետո):

ՀԱԶՎԱԳՅՈՒՏ ՀՈՂԱՏԱՐՐԵՐՆ ԱԲՈՎՅԱՆԻ ԵՐԿԱԹԻ ՀԱՆՔԱՎԱՅՐՈՒՄ

ՀՐԱԶԻԿ ԱՎԱԳՅԱՆ, Երկր. համբ. գիտ. դոկտոր

ՀՀ ԳԱԱ Ս. Քորանյանի անվան
անտեսազիտուրյան ինստիտուտի
գլուխությունը գիտաշխատող

Համառոտագիր

Քիմիական գիտությունը հազվագյուտ հողատարքերի բվին է դասում 17 տարրեր՝ Դ.Մենդելեևի պարբերական աղյուսակի III խմբի երկրորդ ենթախմբի 3 տարրերը՝ սկանդիումը, յուտրիումը ու լանտանումը և լանտանիումը ընտանիքին պատկանող՝ լանտանից հետո առանձին շարքով շարված 14 տարրերը:

Հողվածում քննարկվում են հազվագյուտ հողատարքերի կիրառության ոլորտները և դրանց կարևորության հարցերը: Տրված են հազվագյուտ հողատարքերի քանակներն ու արժեքները ՀՀ Երկարարային հանրավայրերում:

Քանակի բառեր. մոնացիտ, բաստնեզիտ, սկանդիում, հողատարքեր, լանտանիումեր, հազվագյուտ մետաղներ, հարակից:

РЕДКОЗЕМЕЛЬНЫЕ ЭЛЕМЕНТЫ В РУДАХ АБОВЯНСКОГО МЕСТОРОЖДЕНИЯ

ГРАЧИК АВАКЯН, доктор геолого-минералогических наук

главный научный сотрудник

Института экономики им.

М. Котаняна НАН РА,

Аннотация

Химическая наука к числу редкоземельных элементов причисляет 17 элементов: три элемента второй подгруппы III группы периодической таблицы Д.Менделеева – скандий, иттрий и лантан, а также 14 элементов, принадлежащих к семье лантаноидов и расположенных в одном ряду после лантана.

В статье обсуждаются области применения и вопросы важности редкоземельных элементов. Даны количественная и стоимостная (долларовая) оценка редкоземельных элементов в железорудных месторождениях РА.

Ключевые слова: монацит, бастнезит, скандий, редкоземельные элементы, лантаноиды, редкие металлы, сопутствующие компоненты.

RARE EARTH ELEMENTS IN THE ABOVYAN IRON MINE

HRACHIK S. AVAGYAN, Doctor of Sciences (Geology and Mining)

Chief Research Associate

M. Kotanyan Institute of Economics

National Academy of Sciences

Republic of Armenia

Abstract

According to Chemical Science 17 elements, elements of the sub-group 3 of Group III of Mendeleev's periodic table are classified as rare earth elements: scandium, yttrium, lanthanum, and elements that belong to the Lanthanides: a series that includes 14 elements that follow Lanthanum.

The article discusses the areas of application and utilization of rare earth elements and the issues on their importance. The article provides estimates of the quantities and monetary value of rare earth elements in the iron ore mines in the Republic of Armenia.

Keywords: monazite, bastnaesite, scandium, earth elements, the Lanthanides, rare metals, related.